ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« —— » _____ 2010թ. N _____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ՎԱՂԻՆԱԿ ԱՍԼԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 1999թ օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական նկարիչ Վաղինակ Ասլանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բայրոնի փողոցի հ.6 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
Հանձնաժողովի փոխնախագահ **Ա. Ասատրյան**

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ՎԱՂԻՆԱԿ ԱՍԼԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀՀ ժողովրդական նկարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայրենական Մեծ պատերազմի վետերան, պրոֆեսոր Վաղինակ Ասլանյանի ներդրած մեծ ավանդը հայ գեղարվեստի և մշակույթի կերտման և հարստացման ասպարեզում:

Նրա առավել հայտնի կտավներից են՝ գրող Ղուկաս Ղուկասյանի դիմանկարը, Ալ. Սպենդիարյանի և «Ռիմսկի Կորսակովի աշխատանքի ժամանակ» կտավը, «Արամ Խաչատրյանի հեղինակային համերգը», «Տիգրան Պետրոսյան» դիմանկարը և այլն:

Նախագծի հեղինակ
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
հանձնաժողովի փոխնախագահ **Ա. Ասատրյան**